

# ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԽՈՐՀՐԴԻ

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ թիվ 2

ք. Երևան

27.01.2006թ.

Ներկա էին խորհրդի 72 անդամներից 70-ը:

### Օրակարգում.

1. ԵՊՀ խորհրդի նախագահի ընտրություն:
2. ԵՊՀ խորհրդի քարտուղարի ընտրություն:
3. ԵՊՀ խորհրդի աշխատակարգի հաստատում:
4. ԵՊՀ ռեկտորի ընտրության ընթացակարգի հաստատում:

### 1. ԵՊՀ խորհրդի նախագահի ընտրություն:

Նախագահող՝ ՀՀ կրթության և գիտության նախարար, ԵՊՀ խորհրդի անդամ Ս. Երիցյան:

Հ. Հակոբյանը առաջարկեց ԵՊՀ խորհրդի անդամ, ՀՀ պաշտպանության նախարար Ս. Սարգսյանի թեկնածությունը:

Հ. Միրզոյանը առաջարկեց ԵՊՀ նախկին ռեկտոր, ակադեմիկոս Ռ. Մարտիրոսյանի թեկնածությունը:

Մինչ պաշտպանիչ ելույթներին անցնելը ձայն խնդրեց Ռ. Մարտիրոսյանը: Նա որոշ փաստեր նշեց որպես ԵՊՀ ռեկտոր իր կատարած աշխատանքի հիմնական ուղղություններից և ինքնաբացարկ հայտարարեց:

Ս. Սարգսյանի թեկնածությունը գրանցվեց որպես ԵՊՀ խորհրդի նախագահի միակ թեկնածություն:

Ս. Սարգսյանի թեկնածության պաշտպանիչ ելույթներ ունեցան Հ. Հակոբյանը, Գ. Անանյանը, Ֆ. Սարգսյանը, Մ. Հակոբյանը:

Խորհրդի կողմից առաջարկվեց ստեղծել փակ, գաղտնի քվեարկության հաշվիչ հանձնաժողով: Առաջարկվեցին Ա. Ավագյանի, Ա. Ավետիսյանի, Վ. Դումանյանի, Լ. Շենկյանի և Ա. Մամաջանյանի թեկնածությունները:

Որոշվեց հաստատել հաշվիչ հանձնաժողովի կազմը վերոհիշյալ թեկնածություններով:

Կողմ՝ 70, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Փակ, գաղտնի քվեարկության արդյունքները, համաձայն հաշվիչ հանձնաժողովի 27.01.2006թ.-ի նիստի թիվ 1 արձանագրության, հետևյալն էին.

Կողմ` 65, դեմ` 4, անվավեր` 1: (Կից ներկայացվում է հաշվիչ հանձնաժողովի արձանագրությունը և քվեաթերթիկները` փակ ծրարով):

Որոշվեց հաստատել քվեարկության արդյունքները և Ս. Սարգսյանին համարել ընտրված ԵՊՀ խորհրդի նախագահ.

Կողմ` 70, դեմ` 0, ձեռնպահ` 0:

## **2. ԵՊՀ խորհրդի քարտուղարի ընտրություն:**

Նախագահող` ԵՊՀ խորհրդի նախագահ Ս. Սարգսյան:

Քանի-որ քարտուղարին խորհուրդը ընտրում է նախագահի առաջադրությամբ, ապա խորհրդի նախագահ Ս. Սարգսյանը խորհրդից ժամանակ խնդրեց ծանոթանալու հնարավոր թեկնածություններին, և քարտուղարի ընտրությունը հետաձգել մինչ հաջորդ նիստը:

## **3. ԵՊՀ խորհրդի աշխատակարգի հաստատում:**

Ս. Սարգսյանը առաջարկեց հաստատել համապատասխան հանձնաժողովի կողմից առաջարկված ԵՊՀ խորհրդի աշխատակարգի նախագիծը` ըստ անհրաժեշտության հետագայում փոփոխություններ կատարելու հնարավորությամբ:

Որոշվեց հաստատել ԵՊՀ խորհրդի աշխատակարգը:

Կողմ` 70, դեմ` 0, ձեռնպահ` 0:

## **4. ԵՊՀ ռեկտորի ընտրության ընթացակարգի հաստատում:**

Ս. Սարգսյանը առաջարկեց հաստատել համապատասխան հանձնաժողովի կողմից առաջարկված ԵՊՀ ռեկտորի ընտրության ընթացակարգի նախագիծը, որպեսզի հնարավոր լինի հայտարարել մրցույթ, իսկ բոլոր շտկումներն ու փոփոխությունները իրականացնել հաջորդ նիստի ընթացքում:

Որոշվեց հաստատել ընթացակարգը և հայտարարել ԵՊՀ ռեկտորի թափուր տեղի համար մրցույթ, դիմումների ընդունման վերջնաժամկետ հայտարարել ս.թ. մարտի 11-ը, իսկ ռեկտորի ընտրության մրցութային նիստը գումարել ս.թ. մարտի 22-ին:

Կողմ` 70, դեմ` 0, ձեռնպահ` 0:

Խորհրդի նախագահ`

Ս. Սարգսյան

27.01.2006թ.

ք. Երևան